ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1953 Общественные науки

Մ. Արզումանյան

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Մեծանանձար Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» նշանավոր աշխատությունը հանդիսանում է մեր երկրում կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագիր։

Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ կոմունիզմի կառուցման համար անհրաժեշտ է ոչ միայն արտադրողական ուժերի առավել բարձր մակարդակ, այլև մարդկանց հոգևոր կուլտուրայի մեծագույն հարստություն։ Այստեղից էլ՝ այն վիթխարի իդեոլոգիական աշխատանքը, որ ծավալում է մեր պարտիան հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։

Մասսաների կոմունիստական դաստիարակությունը պահանջում է կապիտալիզմի մնացուկների լիկվիդացիա մարդկանց գիտակցության միջից։ Այդպիսի մնացուկներից են բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվները, որոնք դեռևս տեղ են գտնում մարդկանց որոշ մասի մեջ։ Իդեոլոգիական աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է աշխատավորության դաստիարակությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության ու սովետական հայրենասիրության ոգով և բուրժուական նացիոնալիզմի ամեն մի արտահայտության մերկացումն ու ջախջախումը։ Այդ պահանջը հստակորեն ձևակերպված է ՍՄԿՊ XIX համագումարում ընդունված պարտիայի Կանոնադրության մեջ, որտեղ ասված է. «Այժմ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի գլխավոր խնդիրներն են՝ կառուցել կոմունիստական հասարակարգ՝ սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու միջոցով, անընդհատ բարձրացնել հասարակության նյութական և կուլտուրական մակարդակը, հասարակության անդամներին դաստիարակել ինտերնացիոնալիզմի և բոլոր երկրների աշխատավորների հետ եղբայրական կապեր հաստատելու ոգով, ամեն կերպ ամրապնդել Սովետական Հայրենիքի ակտիվ պաշտպանությունը նրա թշնամիների ագրեսիվ գործողություններից»[1]։

Լենինի-Ստալինի պարտիայի, նրա ականավոր գործիչների մղած պայքարը բուրժուական նացիոնալիզմի դեմ ունի վիթխարի պրակտիկ նշանակություն մեր մասսաների կոմունիստական դաստիարակության գործում, կոմունիզմի հաղթական շինարարության գործում։

* * *

Սովետական Միության Կոմունիստական պարտիան աճել ու ամրապնդվել է սկզբունքային ու անողոք պայքար մղելով պրոլետարիատի բո-

---

[1] *Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կանոնադրություն, Հայպետհրատ, 1952, էջ 3.–4։*

վոր թշնամիների, այդ թվում նաև ամեն երանգի բուրժուական նացիոնալիստների ու նացիոնալ-ուկլոնիստների դեմ։

Այդ պայքարում խոշոր դեր է կատարել մեր պարտիայի ականավոր գործիչ, Լենինի ու Ստալինի հավատարիմ աշակերտ ու գինակից, պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ Սուրեն Սպանդարյանը։ Նրա կյանքն ու ռևոլյուցիոն գործունեությունը մի հերոսական տարեգրություն է, պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների ազատագրման մեծ գործին մինչև վերջը անձնվեր ծառայելու հիասքանչ օրինակ։ Բոցաշունչ մարքսիստ և աննկուն ռևոլյուցիոներ Սպանդարյանը Լենինի-Ստալինի պարտիայի հին գվարդիայի փայլուն ներկայացուցիչներից մեկն է, որն իր ամբողջ կյանքն ի սպաս դրեց ժողովրդի ազատագրման վեհ գործին, կոմունիզմի հաղթանակին։

Սուրեն Սպանդարյանի գործունեության մեջ կարևոր տեղ է բռնում նրա անհաշտ ու վճռական պայքարը բուրժուական նացիոնալիզմի դեմ, հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի։ Այդ պայքարը կրել է սիստեմատիկ ու հետևողական բնույթ և դրսևորվել է նրա թե պրակտիկ-կազմակերպական աշխատանքում և թե գաղափարական-տեսական գործունեության մեջ։

Նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում Սպանդարյանը առաջնորդվել է ազգային հարցի մարքսիստական-լենինյան թեորիայով ու ծրագրով։ Նախորը կերպով ուսումնասիրել է Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի հանճարեղ աշխատություններն ազգային հարցի մասին, որոնց մեջ բացառիկ կարևոր տեղ են բռնում Վ. Ի. Լենինի «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» և ընկեր Ստալինի «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը», «Մարքսիզմը և ազգային հարցը» կլասիկ երկերը։

Զինված մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն թեորիայով, Սպանդարյանը սիբիրյան դաժան աքսորում ձեռնարկեց ազգային հարցի մասին աշխատություն գրելուն, բայց վատթարացող առողջությունը և ապա մահը խանգարեցին նրան՝ կենսագործել այդ ինդիրը։

Ազգային հարցը կարևոր տեղ է բռնում մարքսիզմ-լենինիզմի մեջ, այն պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասն է։ Լենինը և Ստալինը ազգային հարցի լուծումը կապում էին սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հետ։

Ազգային հարցը կարևոր նշանակություն ուներ ցարական Ռուսաստանում, որը հանդիսանում էր «ժողովուրդների բանտ»։ Ցարական ինքնակալությունը լինելով ռուս ժողովրդի կեղեքիչը, էլ ավելի ծանր պայմաններ էր ստեղծում ոչ ռուս ժողովուրդների համար. «Հայտնի է,— ասաց ընկ. Լ. Բերիան ՍՄԿՊ XIX համագումարում,— որ ցարիզմը հանդես էր գալիս որպես Ռուսաստանի ժողովուրդների ճնշող ու դահիճ»։[1]

Ազգային հարցը բավականաչափ սրվեց Անդրկովկասում ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ ցարիզմն իրականացնում էր գաղութային, մեծապետական շովինիզմի քաղաքականություն, այլև այն պատճառով, որ Անդրկովկասի բնակչությունը բազմազգ էր և տարբեր ազգերի բուրժուա-

[1] Լ. Բերիա, Ճառ ՍՄԿՊ XIX համագումարում, Հայպետհրատ, 1952, էջ 11։

ներն ու կալվածատերերն իրենց պարտիաների հետ միասին ցարիզմի հովանավորությամբ ու ղեկավարությամբ բորբոքում էին ազգային թշնամանք և երկպառակություն ժողովուրդների միջև։

Լենինը և Ստալինը ուսուցանում էին, որ ցարիզմի ու կապիտալիզմի կործանման համար պետք է անողոք պայքար մղել նացիոնալիզմի դեմ։ Այդ է պահանջվում ամեն մի մարքսիստից, ռևոլյուցիոներից. «Ով կամենում է ծառայել պրոլետարիատին,— գրել է Վ. Ի. Լենինը,— նա պետք է միավորի բոլոր ազգերի բանվորներին, անշեղորեն պայքարելով թե «իրա» և թե օտար նացիոնալիզմի դեմ»[1]։

Լինելով ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի միակ իսկական պաշտպաններն ու ղեկավարները, բոլշևիկներն իրենց գոյության հենց սկզբից՝ 1903 թվականին, ՌՍԴԲ Պ 2-րդ համագումարում հռչակեցին ազգային հարցի լուծման ռևոլյուցիոն ծրագիր—ազգերի ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև առանձին պետականության ստեղծում։ Պատմական այդ փաստաթուղթը դարձավ գործողության ուղեցույց՝ Ռուսաստանի ու Անդրկովկասի բոլշևիկների համար։

Սուրեն Սպանդարյանի մարքսիստական աշխարհայացքը ձևավորվեց Ռուսաստանի և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների բովում, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության անմիջական ազդեցության տակ։ Ստեփան Շահումյանն ընդգծելով այն նորությունը, որ իր հետ բերեց Սպանդարյանը հայ իրականության մեջ, գրել է. «Սուրենը պատկանում էր հայ ծագում ունեցող այն նոր գաղափարական երիտասարդությանը, որ կտրել է իր բոլոր գաղափարական կապերը հայ ազգային ինտելիգենցիայի հետ... Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի միջավայրի ծնունդ էր։ Նրա ուսուցիչները չեն եղել և չէին կարող լինել՝ Ստ. Նազարյան, Արծրունի, Բաֆֆի, Երիստ. Միքայելյան։ Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչներն եղել են՝ Չերնիշևսկի, Իելինսկի, Պլեխանով և ապա՝ Մարքս, Էնգելս...»[2]։

Սպանդարյանի ռևոլյուցիոն աշխարհայացքը կերտվել և նրա քաղաքական գործունեությունն ընթացել է Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի անմիջական ազդեցությամբ ու ղեկավարությամբ։ Նրանք էին գլխավորում Ռուսաստանի բանվորական շարժումը, նոր տիպի՝ մարքսիստական, ռևոլյուցիոն պարտիայի ստեղծման համար մղվող պայքարը, առանց որի անհնարելի էր պրոլետարիատի ու ողջ աշխատավորության ազատագրումը շահագործման լծից։

20-րդ դարի շեմքին ռևոլյուցիայի հանճար Վ. Ի. Լենինը՝ խոսելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ու պրոլետարիատի խնդիրների մասին, մարգարեաբար գրեց. «Պատմությունն այժմ մեր առջև դրել է մերձավորագույն մի խնդիր, որ ամենառևոլյուցիոնն է հանդիսանում որևէ այլ երկրի պրոլետարիատի բոլոր մերձավորագույն խնդիրներից։ Այդ խնդրի իրականացումը, ոչ միայն եվրոպական, այլ նաև (կարող ենք մենք այժմ ասել) ասիական ռեակցիայի ամենահզոր նեցուկի խորտակումը ռուսական պրո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 11։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1948, էջ 424։

լետարիատին կդարձներ միջազգային ռևոլյուցիոն պրոլետարիատի ավանգարդ»։

Ցարիզմի ու կապիտալիզմի տապալման հարցը Ռուսաստանում դարձավ այն ջրբաժան գիծը, որով սահմանազատվում էին ռևոլյուցիոներները ու ռեակցիոներները, մարքսիստները ու օպորտունիստները, ինտերնացիոնալիստները ու նացիոնալիստները։ Բուրժուա-նացիոնալիստական բոլոր պարտիաները ու հոսանքները դեմ էին համաժողովրդական ռևոլյուցիային և ցարիզմի ու տիրող դասակարգերի հետ միասին կազմում էին մի ռեակցիոն լագեր։ Դրանք քարոզում ու վարում էին նացիոնալիստական քաղաքականություն, սերմանում ազգային ներկայացուցչություններ, կազմակերպում ազգամիջյան ջարդեր։ Մենշևիկներով այդ կործանարար ու ոճրագործ տակտիկան՝ մարքսիստները, բոլշևիկները համակված բոլոր ազգերի աշխատավորների միասնական ճակատի ստեղծման գաղափարով, հետևողականորեն կիրառում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականություն. «Բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ,—գրել է Վ. Ի. Լենինը,—սա երկու թշնամական—անհաշտ լոզունգներ, որ համապատասխանում են ամբողջ կապիտալիստական աշխարհի երկու մեծ դասակարգային լագերներին և արտահայտում են երկու քաղաքականություն (ավելին՝ երկու աշխարհայեցողություն) ազգային հարցում»։

Լենինը և Ստալինը սովորեցնում էին, որ ցարիզմի դեմ հաղթական ռևոլյուցիա կազմակերպելու համար պետք է Ռուսաստանի բոլոր աշխատավոր մասսաներին առանց ազգային խտրության ու տարբերության համախմբել ռուսական պրոլետարիատի շուրջը և միասնական ճակատով անցնել վճռական գրոհի։ Այդ հանճարեղ ցուցումը կենսագործելու համար Անդրկովկասի բոլշևիկները ընկեր Ստալինի ղեկավարությամբ անողոք պայքար ծավալեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ. «Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան,—գրել է Ի. Վ. Ստալինը,—ուժեղ է նացիոնալիզմի դեմ մղած պայքարում։ Վրացական սոցիալ-դեմոկրատները պայքարել են «իրենց» նացիոնալիստների, նացիոնալ-դեմոկրատների և ֆեդերալիստների դեմ. հայ սոցիալ-դեմոկրատները՝ «իրենց» դաշնակցականների դեմ. մուսուլմանականները՝ պանիսլամիստների դեմ։ Եվ դրանց դեմ մղած պայքարում իր կազմակերպություններն ընդլայնել ու ամրացրել է կովկասյան սոցիալ-դեմոկրատիան»։

Շնորհիվ ընկեր Ստալինի ղեկավարության՝ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները հենց սկզբից ստեղծվեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքով և հաղթությամբ պայքար ծավալեցին նացիոնալիզմի դեմ։ Բոլշևիկյան պարտիայի առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը հաճախակի է ընդգծել կովկասյան ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի այդ արժանիքը և ցուցում է տվել Ռուսաստանի բոլոր կազմակերպություններին կիրառել բանվորների միավորման պրոլետարական ինտերնացիոնալիզմի այդ փորձված մեթոդը։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր, 5, էջ 492։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 20, էջ 13։
3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 2, էջ 336։

նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում Լենինի ու Ստալինի հավատարիմ գինակիցներն էին ականավոր բոլշևիկներ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։ Նրանք որպես համապարտիական մասշտաբի գործիչներ պայքարում էին նացիոնալիզմի դեմ և անմիջականորեն գլխավորում էին բոլշևիկների պայքարը ընդդեմ «դաշնակցականների», «մշակականների», «սոցիալիստների», «հնչակյանների» և այլն։

Սուրեն Սպանդարյանի գրական ժառանգությունը և պարտիական-քաղաքական բեղմնավոր աշխատանքը ամբողջությամբ ներծծված են ազգային հարցի լենինյան-ստալինյան տեսությամբ, պրոլետարական ինտերնացիոնալիզմով։ Նրա յուրաքանչյուր հոդվածն ու ելույթը շեշտակի կրակոց է թշնամու վրա։ Լենինյան-ստալինյան տրամաբանությամբ գաստիարակված ու կոփված անվեհեր բոլշևիկ Սպանդարյանը բառիս բուն իմաստով նացիոնալիստների ահն ու սարսափն էր։

Ղեկավարվելով Լենինի ու Ստալինի ցուցումներով, Ս. Սպանդարյանը ամենից առաջ մերկացնում է նացիոնալիզմի ռեակցիոն էությունը և բացահայտում նրա վնասակարությունը աշխատավոր մասսաների ազատագրական պայքարում. «Նացիոնալիստական կրքերի բորբոքումը, դրանց պայքարը միշտ էլ եղել են ժողովրդական մասսաների ուշադրությունը նրանց իշխող դրության իսկական պատճառներից հեռացնելու լավագույն միջոցը, միշտ էլ մարդկանց մի ամբողջ դասակարգի համար հարմար հող են եղել իրենց դասային, խմբային մանրիկ գործերը միշտ էլ ազգության հաշվին՝ հանուն «ազգային գաղափարի» սարքելու»[1]։ Նացիոնալիզմը պարտիական իդեոլոգիա է և կոչված է հավերժացնելու կապիտալիզմի գոյությունը։ Ցարիզմը և բուրժուազիան միշտ էլ օգտագործել են այդ վնասը ընդդեմ պրոլետարիատի, աշխատավորության միավորման և ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում կազմակերպել ազգամիջյան կռտորածներ, հրեական, հայ-թյուրքական ջարդեր և այլն։ Ստեփան Շահումյանը միանգամայն ճիշտ կերպով մատնանշել է, որ «Կովկասում ռևոլյուցիայի ամենասխեմի թշնամին միշտ եղել է և կմնա նացիոնալիզմը»[2]։

Անդրկովկասի բոլշևիկների մեծագույն ծառայությունն է, որ նրանք հաջողվեց եռանդուն աշխատանքի շնորհիվ ու վճռական պայքարով մերկացնել ու ջախջախել նացիոնալիզմը։ Միայն այդ ձևով կարելի էր հասնել ժողովուրդների իսկական ազատագրմանը։ Պատահական չէ, որ բոլշևիկների պայքարը մենշևիկների դեմ միանյուսվեց բոլշևիկների անողոք պայքարի հետ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ։

Մենշևիկներն իրենք հանդիսանում էին կատաղի նացիոնալիստներ։ Ընկեր Ստալինը 1913 թվականին գրած «Նացիոնալիզմի ուղիով» հոդվածում՝ տալով Կովկասյան մենշևիկների էվոլյուցիայի պատկերը, նշում է. «Կովկասյան լիկվիդատորների շրջապարտը դեպի նացիոնալիզմ պատահականություն չէ։ Պարտիական տրամաբանության լիկվիդացիան վաղուց են սկսել նրանք։ Ծրագիր-մինիմումի «սոցիալական մասին» վերացումը, «պրոլետարիատի հեգեմոնիայի» վերացումը, անկեղծ պարտիան լեգալ կազ-

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 221։

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 309։

մակերպությունների կից օժանդակ կազմակերպություն հայտարարելը— այս ամենը հանրահայտ բաներ են։ Այժմ հերթը հասել է ազգային հարցինդ[1]։

Եվ իրոք, մենշևիկները ոտնակոխ անելով ազգային հարցի լենինյան ծրագիրը, գավանեցին կուլտուր-ազգային ավտոնոմիայի բուրժուա-նացիոնալիստական ծրագիրը։ Ընդորում այս հարցում բացառիկ ակտիվություն էին ցուցաբերում նաև կովկասյան մենշևիկները՝ Նոյ Ժորդանիայի գլխավորությամբ։ Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ նրանք դարձան սոցիալ-շովինիստներ և ցարական «հայրենիքի» պաշտպաններ։ Իզուր չէ, որ Կովկասի փոխարքայի օգնականը մենշևիկների մասին գրել է. «Ներկայումս ոչ մի անհրաժեշտություն չկա որևէ ռեպրեսիվ միջոց ձեռք առնել այդ պարտիայի անդամների դեմդ[2]։

Սուրեն Սպանդարյանը մերկացնում էր մենշևիկներին որպես բուրժուազիայի գործակալների՝ բանվորական շարժման մեջ։ Նա իրեն հատուկ ոևոլյուցիոն կրքոտությամբ խարազանում էր մենշևիկների լիդերներ Բանին, Մարտովին, Նոյ Ժորդանիային, որոնք լիովին գավաճանեցին պրոլետարիատի գործին։ Նրանց փեշերի տակ էր ծվարել հայ մենշևիկների խումբը (Դ. Ղարաջյան—Արկոմեդ, Ա. Զուբարյան, Ա. Երզնկյան և ուրիշները) և ոչնչ չէր խնայում մթագնելու հայ բանվորների դասակարգային ինքնագիտակցությունը։ Մի առիթով խարազանելով հայ մենշևիկներին, Սպանդարյանն ասել է. «Մենք ձեզանից՝ մենշևիկներից սպասում ենք ավելի մեծ գավաճանություն։ Դուք ընդունակ եք ավելի մեծ ստորություններ, որովհետև գագարել եք բանվորների շահերի մասին մտածելուց, որովհետև չեք հավատում ոևոլյուցիային և նրա հայրենակին։ Բայց ոևոլյուցիան ապրում է և նա իր ճամբից դեն կշպրտի նրա ընթացքը կանգնեցնող բոլոր զզվելի օպորտունիստներինդ[3]։

1912 թվականին Պրագայի կոնֆերենցիայում տված իր զեկուցման մեջ Սպանդարյանը մերկացրեց Կովկասյան մարզային Կոմիտեի պառակտիչ ու հակաժողովրդական գործունեությունը։ Այդ մենշևիկյան Կոմիտեն ոչ մի առնչություն չուներ «ինտերնացիոնալիզմի, սոցիալիզմի» հետ, որոնց նա համարում էր «մահացու մեղքեր»։ Պատահական չէր, որ նացիոնալիստ-մենշևիկները պաշտպաններ որոնելով բնակչության բոլոր խավերի մեջ, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնի համար ձայն տվին բուրժուա-կադետ, «մեր պստլիկ և տնարույս Վիլհելմ 2-րդ»— Ա. Խատիսովի օգտին։ Բացահայտելով այդ արարքի ողջ հակաժողովրդական էությունը, Սպանդարյանն ասում է. «... այ քեզ ս.—դ.-ի ընտրյալ։ Դրանից ավելի խայտառակ ինչ կարող էր լինել։ Փոխարքայի կնոջ և տեղական ամբողջ ադմինիստրացիայի սիրելին, հայ կաթողիկոսի և Վրաստանի էկզարխի օրհնությունն ստացողը, պահնորդական բաժնից, գաղտնի ոստիկանությունից և պարետային վարչությունից շնորհավորանք ստացողը, ռուսական փառապանծ զորականության կինաց իմոդը, որ միաժամանակ դաշնակցական է, ս.—դ. և կադետ,—ս.—դ. կողմից ընտրվում է քաղաքագլուխ...դ[4]։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 2, էջ 335։

[2] Քաղվածքը բերում ենք ըստ Գ. Խաչապուրիձեի „Большевики Грузии в боях за победу Советской власти" գրքի, Մոսկվա, 1951, էջ 45։

[3] Քաղվածքը բերում ենք ըստ. Ա. Մռավյանի հուշերի, տես «Խորհրդային Հայաստան», № 103, 1927 թ., մայիսի 7։

[4] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 305։

Ակներև էր մենշևիկների բուրժուա-նացիոնալիստական էությունը և նրանց աղգակցությունը կադետների հետ։ Հայ իրականության մեջ կադետների դերում հանդես էին գալիս «մշակականները» և քարոզում դասակարգային համագործակցություն ազգի ներսում։

Նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում Սպանդարյանն առաջնորդվում էր ազգի մարքսիստական—լենինյան հասկացողությամբ, գտնելով որ ազգը պատմականորեն կազմավորված մարդկանց ընդհանրություն է և կապիտալիզմի պայմաններում նրա մեջ գոյություն ունեն հակամարտ դասակարգեր։ Սպանդարյանը շատ որոշակիորեն խոսում է ազգի ներքնախավերի ու վերնախավերի մասին։ Նա «Օրվա խնդիրներ» հոդվածում, մերկացնելով կադետներին, որոնք հավակնում էին իրենց ներկայացնել որպես «ազգի կրողներ ու ներկայացուցիչներ», գրում է. «Բայց ինչ պետք է հասկանանք «ազգ» խոսքի տակ։ Եթե այդ հասկացողության տակ պետք է ընդունել քաղաքային խոշոր և միջին բուրժուազիան, եթե «ազգ» ասելով պետք է հասկանանք լիբերալ կալվածատերերին, գյուղական բուրժուազիան և նրանց հարող խավերը, նրանց իդեոլոգները և ծառաները, այն ժամանակ, այո, կադետները ներկայացնում են «ազգը»[1]։

Սակայն Սպանդարյանը հիմնավորում է այն միտքը, որ ազգի արմատական շահերը կարող են ներկայացնել ոչ թե այդ շահագործողները, որոնք սոսկ պարազիտներ են ազգի մարմնի վրա, այլ նրա ճնշված մեծամասնությունը, որը ձգտում է ազատության և հետևողական պայքարով անպայմանորեն կհասնի դրան. «ճնշված, հարստահարված և տնտեսական քայքայման վերջին աստիճանին հասած, սովամահ դրության և անծայր տգիտության ճիրաններում գտնվող, արթնացած, ազատության և հողի ձգտող բազմամիլիոն գյուղացիությունը, պրոլետարիատը, որ իր արյուն քրտինքով ստեղծում է բոլոր հարստությունները և իր հզոր հարվածներով ու իր կովով ցնցում է ամբողջ երկիրը, քաղաքային աղքատությունը—ահա ով է ներկայացնում ազգը, ահա ովքեր են կազմում այն ազատագրական հզոր փոթորկի գրգիչ գործոնները, որի մակերևույթի վրա հաստատվելու փորձեր են անում կադետները»[2]։

Սպանդարյանը մատնանշում է՝ միայն պրոլետարիատն է, որ դաշնակցած գյուղացիության հետ «կովում է ազգի բարձրագույն շահերի համար» և կործանելով շահագործողների լուծը, ազգի համար կստեղծի ազատ ու երջանիկ կյանք։ Ելնելով կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի պատմական օրինաչափությունից, Ս. Սպանդարյանը հավատացած էր, որ ապագայում կստեղծվեն շահագործումից ու շահագործողներից ազատ ազգեր, որոնք և կկերտեն իրենց երջանիկ կյանքը։ Սպանդարյանն այդ մեծ գործին նվիրեց իր ողջ եռանդը և նույնիսկ կյանքը։

* * *

Անդրկովկասում և հատկապես հայ իրականության մեջ բացառիկ կարևոր նշանակություն ուներ Սուրեն Սպանդարյանի պայքարը հայկական բուրժուազիայի ռազմաշունչ պարտիայի՝ դաշնակցության դեմ։ Լինելով

---

1 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 92։
2 Նույն տեղում։

իր դասակարգի շահերի պաշտպանը «դաշնակցությունն» բուրժուա-նացիոնալիստական պարտիան հայ ժողովրդի ոխերիմ թշնամին է։ Ահա թե ինչու «հայ ժողովրդի ազատագրության համար Հայաստանի բոլշևիկների ամբողջ գործունեությունը ընթանում էր «դաշնակցության» պարտիայի դեմ անհաշտ պայքար մղելու և այդ պարտիայի հակաժողովրդական բնույթը մերկացնելու նշանարանով, մի պարտիա, որը ձգտում էր հայ ժողովրդին տանել ոչ թե դեպի ազատագրություն, այլ անխուսափելի կործանում, որ անհերքելիորեն ապացուցված է պատմության ամբողջ ընթացքով»[1]։

Դաշնակցությունն իր գոյության հենց սկզբից վարում էր անասնական շովինիզմի քաղաքականություն և պայքարում ռևոլյուցիոն շարժումների դեմ։ Դրա համար նա դիմում էր բոլոր հնարավոր գարշելի միջոցների՝ բռնության, կեղծիքի, դեմոգոգիայի, հայհոյանքի և այլն։ Դաշնակցությունը իսկական բռնակալություն էր հայ իրականության մեջ և դաժան դատաստան էր տեսնում բանվորների ու գյուղացիների հետ։ 1903 թվականին բոլշևիկյան մամուլը մերկացրեց դաշնակցականներին, որոնք մասնակցել էին Բաթումի բանվորների գործադուլի ճնշմանը[2]։ 1904 թվականի ապրիլին Ալեքսանդրոպոլում կազմակերպված գործադուլն ու միտինգը ցրվում է դաշնակցականների կողմից, որի համար քաղաքի պրիստավ Խերխելիձեն շնորհակալություն է հայտնում նրանց խմբապետ Ջալլաթին։

Կովկասի սատրապ Վորոնցով-Դաշկովը Ստոլիպինին գրած իր նամակում գոհունակությամբ նշում էր, որ դաշնակցականները բռնությամբ ճնշում են գործադուլները Բաքվի նավթահանքերում[3]։ Նույնը մենք տեսնում ենք գյուղական վայրերում։ 1906 թվականին Ախալքալակի գավառում դաշնակցականները խեղդեցին հայ գյուղացիության մեջ ծագած ագրարային շարժումները ընդդեմ տեղական կալվածատերերի։

Դաշնակցությունը հանգես էր գալիս որպես արևմտյան իմպերիալիզմի ստոր գործակալություն ու կամակատար։ Արևմտյան Հայաստանի ազատագրման կեղծ ցուցանակի տակ նա ծավալեց ավանտյուրիստական գործունեություն և դարձավ բազմաչարչար հայ ժողովրդի ջարդերի մեղսակից։ Դաշնակցականները երազում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի օգնությամբ ու հովանավորությամբ ստեղծել այսպես կոչված «ծովից-ծով» հայկական թագավորություն։

Այդ բոլորը վնասում էր ռևոլյուցիայի գործին, աշխատավոր մասսաների համախմբմանը։ Ահա թե ինչու Անդրկովկասի բոլշևիկներն ամեն մի քայլափոխում դիմակազերծ էին անում դաշնակցականներին և բացահայտում նրանց բուրժուա-նացիոնալիստական ռեակցիոն էությունը։ Այդ սուր պայքարի կրակի առաջին գծի վրա էր Սուրեն Սպանդարյանը։

Բացահայտելով դաշնակցականների սև-հարյուրակային էությունը, Սպանդարյանը նրանց անվանում է «հայ կյանքի ցեցերը», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը բթացնողներ և հայ գյուղացիությանը ամե-

---

[1] Դր. Հարությունյան, Սովետական Հայաստանի 25 տարին, Հայպետհրատ, 1945, էջ 7։

[2] Տես «Պրոլետարիատի կռիվը» № 2--3, 1903 թ.։

[3] Տես Журнал „Красный Архив", т. 34, стр. 206.

նաանամոթ կերպով հարստահարողներ ու կեղեքողներ»[1]։ Մերկացնելով դաշնակցությանը, Սպանդարյանը գրում է, որ այդ պարտիան իր միլիտարիզմով, ոստիկանությամբ, բանտերով, դատարաններով հայ իրականության մեջ ստեղծել է մի անտանելի, դժոխային դրություն, որը պակաս չէ ցարական բռնակալությունից։ Նա մատնանշում է, որ դաշնակցությունը չի գործում առանց դաշույնի, ատրճանակի, կոպիտ բռունցքի, կեղտոտ անոնիմ նամակների, հայհոյանքի և այլ նողկալի բարքերի։ Սպանդարյանը մերկացնում է հենց այդպիսի բարքերի մարմնացում հանդիսացող դաշնակցական խուժանապետ Ռաժակին և ուրիշներին։

Սպանդարյանը սպանիչ ծաղրի ենթարկելով դաշնակցականներին, ընդգծում է. «պարոններ... դուք «ամենաուժեղ և ամենաազդեցիկ» խոչընդոտ եք հայ բանվոր դասակարգի զարգացման, նրա դասակարգային գիտակցության պարզման...»[2]։

Անվեհեր բոլշևիկ Սպանդարյանը՝ Ստ. Շահումյանի հետ միասին մինչև վերջը մերկացրել է դաշնակցության՝ այդ «հերմոֆրոդիտական» պարտիայի քվազի-սոցիալիստական բնույթը։ «Մեր դերը գյուղերում» նշանավոր հոդվածում, որը տպագրվեց 1906 թվականին՝ բոլշևիկյան «Նոր Ռոսք» թերթում, Սպանդարյանը հայ բոլշևիկներին ու աշխատավոր մասսաներին ուսուցանում է, որ հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն «իրենց անվանել են միշտ «սոցիալիստ», իսկ գործով եղել են ամենառխերիմ թշնամի սոցիալիստական գաղափարի»։ Բոլշևիկները ռեվոլյուցիոն շարժումների միակ կազմակերպիչներն էին Ռուսաստանում և Անդրկովկասում։

Դաշնակցություն պարտիային «սոցիալիստ» անունը պետք էր միայն իր ռեակցիոն էությունը քողարկելու և մասսաններին մոլորեցնելու համար։ Ստ. Շահումյանը, խոսելով այդ մասին, մատնանշում է, որ եթե սկզբում դաշնակցությունն զբաղվում էր միայն «թյուրքահայ հարցով», ապա 1903 թվականից, երբ ցարիզմի կողմից հայ եկեղեցական գույքերի բռնագրավման ու ժողովրդական դպրոցների փակման կապակցությամբ ուժեղացավ ազգային-ազատագրական շարժումը հայերի մեջ, նա հայ բնակչության մեջ կողմնակիցներ շահելու համար դավանեց նաև «ռուսահայ հարցը»։ Ավելի ուշ, 1905 թվականի ռևոլյուցիայի ժամանակ դաշնակցությունն իրեն հայտարարեց «սոցիալիստական», քանի որ հայ բանվորներն ու գյուղացիները մտել էին դասակարգային ուժեղ պայքարի մեջ, և հարկավոր էր ձևականորեն նրանց «բարեկամիս» տեսք ընդունել։ Այդ բոլորը, սակայն, սոսկ մեքենայություններ էին, տակտիկական խարդախ պրիոմներ, որոնք չէին կարող փոխել և չփոխեցին դաշնակցության բուրժուական, ռեակցիոն էությունը, նրա ատելությունն ու թշնամանքը ռևոլյուցիայի ու մասսաների նկատմամբ։ «Կովկասի հայ բուրժուազիան,—գրել է Ստ. Շահումյանը,—բնականորեն «դաշնակցություն» պարտիայի մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 40։
[2] Նույն տեղում, էջ 41։
[3] Նույն տեղում, էջ 79։

պաշտպանին, ուստի և բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես օգնում էր այդ պարտիային»[1]:

«Կայծ» բոլշևիկյան թերթում տպագրված «Սոցիալիստ» դաշնակցությունը և թյուրք բանվորները» հոդվածում Սպանդարյանը ցույց է տալիս, թե ինչպես դաշնակցականները սոցիալիզմի անվան տակ վարում են սանձարձակ նացիոնալիզմի քաղաքականություն, որպեսզի թշնամանք սերմանեն Անդրկովկասի ժողովուրդների միջև և վիժեցնեն ռևոլյուցիայի գործը. «այդ quasi—սոցիալիստական «դաշնակցությունը» ամեն կերպ աշխատում է սնջատել հայ բանվորությանը ուրիշ ազգերի պրոլետարիատից և օգտվելով այդ բաժանումից, շահագործել այդ մասսան իր բուրժուական նպատակների համար»[2]: Դաշնակցականները ջանք չէին խնայում հայ բանվորներին գրգռելու ադրբեջանական բանվորների դեմ և հայ կապիտալիստներից պահանջում էին, որպեսզի ադրբեջանական դործազուրկ բանվորներին աշխատանքի չընդունեն: Լինելով ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպան, Սպանդարյանը հոդվածի վերջում կոչ է անում. «Մենք գիմում ենք ընկեր-հայ բանվորներին, դիմում ենք նրանց դասակարգային գիտակցության, նրանց առողջ ու պարզ տրամաբանության և առաջարկում ենք ընդունել իրենց կովող շարքերը և՛ թուրք պրոլետարներին»[3].

Դաշնակցականների թթու նացիոնալիզմը դրսևորվում էր ամենուրեք և ամեն ինչում: Նրանք քայքայիչ գործունեություն ծավալեցին բանվորական մասսայական կազմակերպությունների ստեղծման գործում և ձգտում էին բոլոր հնարավոր միջոցներով՝ նացիոնալիզմով թունավորել մասսաներին: Այդ իր ցայտուն արտահայտությունը գտավ պրոֆմիությունների կազմակերպման մեջ, որը մեծ թափ ստացավ հատկապես ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին: Դաշնակցականների նպատակն էր ստեղծել պարտիական-դաշնակցական-ազգային պրոֆմիություններ և ջլատել Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ միասնությունը: Նույն ոգով էին գործում նաև հայ «սպեցիֆիկները», որոնք նույնիսկ լույս աշխարհ գցեցին «Հայ կատելչչիկների արհեստակցական միություն»-ը (1906—1907 թթ.), բայց այն շուտով կազմալուծվեց, բանվորներն ամբողջովին երես շրջեցին նրանից:

Ընկեր Ստալինը 1906 թվականին գրած «Պրոֆեսիոնալ միությունները Թիֆլիսում» հոդվածում դատապարտելով դաշնակցականների այդ կոնտրռևոլյուցիոն տակտիկան, մատնանշում է. «Ի՞նչ է նշանակում պարտիական արհեստակցական միություններ: Այդ, նախ և առաջ նշանակում է, որ տարբեր պարտիաների անդամները պետք է միավորվեն տարբեր միությունների մեջ... Ֆեդերալիստների համար առանձին արհեստակցական միություն, դաշնակցականների համար՝ առանձին, վրացիների համար՝ առանձին, հայերի համար՝ առանձին և այլն. Մինչդեռ բոլոր գործարանատերերը, անկախ նրանց քաղաքական համոզմունքներից, միավորվում են

[1] Ս ա. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Ընտիր երկեր, էջ 224:
[2] Ս. Ս պ ա ն դ ա ր յ ա ն, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 31:
[3] Նույն տեղում:

մեկ միության մեջ, դաշնակցականները մեզ խորհուրդ են տալիս բաժանվել առանձին խմբերի և դրանով ջլատել մեր միասնությունը»[1]։

Ելնելով ստալինյան հանճարեղ ցուցումներից, Սուրեն Սպանդարյանը՝ Տիմոֆեյը իր մի շարք հոդվածներում մերկացնում է դաշնակցության այդ նացիոնալիստական տակտիկան և ցույց տալիս, որ պրոլետարիատի շահը հրամայաբար պահանջում է ստեղծել անպարտիական, ինտերնացիոնալ պրոֆեսիոնալ միություններ։

«Պրոֆեսիոնալ միությունները և դաշնակցությունը» կրակոտ հոդվածում Սպանդարյանը գրում է. «Դաշնակցությունը իրեն լոզունգ հայտարարեց—զուտ ազգայնական արհեստակցական միություններ։ Դիտե՞ք ինչու, սոցիալ-դեմոկրատիայի համար պարզ է, որ յուրաքանչյուր բանվորական կազմակերպություն, որքան էլ որ նա հրաժարվի ամեն մի քաղաքական կովից, որքան էլ որ նա բացասի ամեն մի քաղաքական որոշ ծրագիր—վերջի-վերջո կանգնած լինելով դասակարգային տեսակետի վրա և մի անգամ սկսած լինելով հենց թեկուզ տնտեսական կռիվ—երկսթե անհրաժեշտությամբ և իրերի ամբողջ ընթացքով անխուսափելիորեն պիտի ենթարկվի այն քաղաքական կուսակցության ղեկավարությանը, որը, ըստ Էնգելսի, «ներկայացնում է անգիտակից պրոցեսի գիտակից արտահայտիչը», այսինքն սոցիալ-դեմոկրատիային։

Այդ պատճառով մենք սառնասրտությամբ նայում ենք անկուսակցական արհեստակցական միությունների վրա և ամեն կերպ նպաստում ենք նրանց կազմակերպվելուն։ Մինչ դաշնակցությունն ամենից ավելի երկյուղ է կրում անկուսակցականությունից. նա վախենում է, որ այդ անկուսակցական կազմակերպությունների մեջ երևան կգա իր բուրժուական և նեղ ազգայնական բնույթը, որ կարող է խորտակվել այն չինական պարիսպը, որը նա այնքան ջանքով բարձրացրել է հայ և մյուս ազգերի միջև, նա երկյուղ է կրում, որ պրոլետարիատի՝ բոլորին հայտնի պատճառներով մոլորության մեջ գտնվող, հետևաբար և դաշնակցության կողմից շահագործվող մասը, ճանաչելով ճշմարտությունը, ձեռք կկարկառե սոցիալիզմի իսկական դրոշի տակ կռվող եղբայր պրոլետարիատին»[2]։

Անդրկովկասի բոլշևիկները ընկեր Ստալինի ղեկավարությամբ ոչ միայն ճիշտ տակտիկա մշակեցին պրոֆմիությունների նկատմամբ, այլև մեծագույն եռանդով կիրառեցին այն ու հասան լիակատար հաղթանակի՝ դաշնակցության և այլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների նկատմամբ։ Շնորհիվ բոլշևիկների քրտնաջան ու սիստեմատիկ աշխատանքի՝ պրոֆմիությունները դարձան ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ու բանվորական շարժման կայուն հենակետեր։ Հաղթանակեց պրոլետարական ինտերնացիոնալիզմը և կրախի մատնվեց բուրժուական նացիոնալիզմը։

Դաշնակցության դեմ մղվող պայքարը սուր բնույթ ընդունեց 1907—1908 թվականներին Բաքվում տեղի ունեցած նավթարդյունաբերողների և բանվորների միջև ծավալված խորհրդակցական կամպանիայում։ Այդ կամպանիան հաջողությամբ անցկացրին բոլշևիկները՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ։ Բոլշևիկներն սկզբում մշակեցին խորհրդակցության ակ-

[1] Քաղվածքը բերում ենք Լ. Գ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գրքից, Հայպետհրատ, 1945, էջ 74։

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 27։

տիվ բոյկոտի տակտիկան, քանի որ նավթարդյունաբերողները անհավասարության դիրքերից փորձում էին մանր զիջումներով բանվորներին հաշտեցնել իրենց ստրկական վիճակի հետ և նրանց հեռացնել դասակարգային պայքարից։ Մինչդեռ «բոյկոտի տակտիկան,—մատնանշում էր ընկեր Ստալինը,—անվստահություն ներշնչելով նավթարդյունաբերողների նկատմամբ, մասսայի աչքում ամենալավագույն կերպով ընդգծում է պայքարի՝ որպես կյանքի բարելավման համար միակ միջոցի անհրաժեշտությունը»[1]։ Բոլշևիկները բանվորներին կոչ էին անում դուրս գալ ընդհանուր գործադուլի և ակտիվ պայքարով հասնել սեփական պահանջների բավարարման։

Դաշնակցականները՝ մենշևիկների և էսեռների հետ գտնվելով միևնույն կոնտրռևոլյուցիոն լագերում, պաշտպանելով բուրժուազիայի շահերը, ցարական իշխանությունների հետ միասին վիժեցրին ընդհանուր գործադուլը, իսկ երբ մի քիչ ավելի ուշ, իրադրության փոփոխության պատճառով, բոլշևիկները առաջ քաշեցին «խորհրդակցություն երաշխիքներով կամ ոչ մի խորհրդակցություն» լոզունգը, դաշնակցականները արտահայտելով նավթարդյունաբերողների ցանկությունները, պահանջեցին խորհրդակցության պարտադիր բոյկոտ։ Սակայն, բանվորները հիմնականում գնացին բոլշևիկների հետևից և քվեարկեցին հօգուտ նրանց տակտիկայի։ Մենշևիկները, էսերները և դաշնակցականները խայտառակ պարտություն կրեցին։

Խորհրդակցական կամպանիայի ժամանակ Սուրեն Սպանդարյանը հետևողականորեն կիրառելով բոլշևիկյան տակտիկան, քայլ առ քայլ մերկացնում էր դաշնակներին, «սպեցիֆիկներին», «հնչակյաններին», որոնք ցանկանում էին այլասերել հայ բանվորներին և նրանց հաշտեցնել հայ կապիտալիստների հետ։ „Гудок“, „Бакинский Пролетарий“, „Бакинский Рабочий“ թերթերում, որոնք հրատարակվում էին ընկեր Ստալինի ղեկավարությամբ, Սպանդարյանը հանդես է գալիս մի շարք մարտական հոդվածներով և մերկացնում այդ նացիոնալիստական թափթփուկների հակաժողովրդական էությունը։ Նա խարազանում է դաշնակների «փեշքեշային» գործադուլի տակտիկան և ցույց տալիս, թե ինչպես հայ բանվորները երես են դարձնում նրանցից. «Հայ բանվորների արթնացումն օրըստօրե ավելի է խորանում և առաջ գնում, և իզուր են դաշնակները փորձում կասեցնել այդ պրոցեսը։ Դաշնակները հայհոյանք են թափում, զրպարտում, ցեխ շպրտում, մի խոսքով՝ անցնում են ամեն չափ ու սահման և դրանով ավելի ևս ցույց տալիս, որ տատանվում է նրանց ոտքի տակի հողը»[2]։

Բանվորական „Гудок“ թերթը, բացահայտելով դաշնակների տակտիկայի ողջ վնասակարությունը, խորհրդակցական կամպանիայի ժամանակ, գրում է. «Փաստորեն դաշնակները վախենում են պրոլետարիատի կազմակերպվածությունից։ Կոլեկտիվ պայմանագիրը ենթադրում է համախմբված պրոլետարիատ։ Խորհրդակցությունը կօգնի մեզ կազմակերպել նրան և ամենից առաջ ամրապնդել պրոֆեսիոնալ միությունները։ Բայց կազմակերպված պրոլետարիատը ամենակատաղի թշնամին է այնպիսի կազմակերպությունների, ինչպիսին է դաշնակցությունը»[3]։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 2, էջ 104։

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 110։

[3] Տես „Гудок“ № 15, 1908 г., 20 января, Баку.

Դաշնակցությունը, որպես բուրժուական պարտիա, սարսափում էր պրոլետարական կազմակերպությունից և նրա ինքնուրույն քաղաքականությունից, ուստի ամեն գնով ձգտում էր նացիոնալիզմի կնիքը դնել հայ բանվորների վրա և նրանց հեռացնել իսկական բանվորական միություններից ու խորհրդակցություններից։ Դաշնակցականները և «սոցեցիֆիկները» հատկապես պայքարում էին ռուսական պրոլետարիատի ռևոլյուցիոն բարերար ազդեցության դեմ և կաշվից դուրս էին գալիս, որպեսզի հայ բանվորներին կտրեն համառուսական ռևոլյուցիոն շարժումից։ Այսպես են վարվել կործանման դատապարտված բոլոր դասակարգերն ու պարտիաները, որոնք իրենց կյանքը երկարացնելու համար դիմել են ամեն մի ռեակցիոն ու գարշելի միջոցի։

Սպանդարյանը, մերկացնելով դաշնակցության ռեակցիոն ու նոցկալի դերը հայ աշխատավորության նկատմամբ, ցույց է տվել այդ նացիոնալիստական պարտիայի ոչ միայն բուրժուական էությունը, այլև նրա սերտ կապը Էջմիածնի կաթողիկոսության հետ, որպես մի միջոցի՝ հայ բանվորներին ու գյուղացիներին խավարի ու տգիտության մեջ պահելու, ազգային սահմանափակության մեջ կաղապարելու և համառուսական ռևոլյուցիայից հեռացնելու համար։ Դրա պերճախոս օրինակը կարող է լինել այսպես կոչված հայկական «ազգային Սահմանադիր ժողովի» պատմությունը։

1906 թվականին դաշնակցականների հորդորանքով Էջմիածնի կաթողիկոսը կոնդակ հրատարակեց «հոգևոր-վարչական հաստատության պաշտոնյաների» ընտրության մասին, որով եկեղեցական պաշտոնյաների ընտրությունը պետք է կատարեր «հայ ազգաբնակությունից ընտրված պատգամավորների ժողովը»։ Դաշնակցականները վերջինս կնքեցին «ազգային Սահմանադիր ժողով» սնապարծ անունով և հայտարարեցին, որ նա պետք է առաջ անցնի ու «մշակի հայկական ներքին սահմանադրություն»։ Այդ բոլորը դաշնակները համարեցին «ռևոլյուցիոն ակտ» և կաթողիկոսության հետ միասին աստվածային պսակ հյուսեցին նրա շուրջը։

Սպանդարյանը մերկացրեց այդ դատարկամիտ փառամոլությունը և դաշնակների ավանտյուրիստական գործունեությունը դիպուկ կերպով ու սրամիտ իրոնիայով անվանեց «Հեղափոխություն մի բաս ջրում»։ Այսպես կոչված Հայկական Սահմանադիր ժողովի հրավիրումը մի կոնտրռևոլյուցիոն, նացիոնալիստական միջոցառում էր հայ ժողովրդի ուշադրությունը շեղելու ցարիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարից, կազմալուծելու անդրկովկասյան ժողովուրդների միասնական ճակատը։ Իզուր չէ, որ ցարական կառավարությունը սկզբում բարեհաճ վերաբերմունք ուներ դեպի այդ ազգային եկեղեցական ժողովը։ «Կենտրոնական ժողովը» հոդվածում Տիմոֆեյը գրում է. «այդ «ազգային» Սահմանադիր ժողովը ջլատում է հեղափոխական ուժերը, բաժան-բաժան անում նրան, դառնալով գործիք ռեակցիայի ձեռքին։

Մյուս կողմից՝ վերոհիշյալ Սահմանադիր ժողովի իսկական աստառը բուրժուական նացիոնալիստական ձգտումներն են։ Հայկական Սահմանադիր ժողովը ոչ այլ ինչ է, եթե ոչ... դաշնակցության բուրժուական ձգտումների մարմնացումը։ Առաջ է մղվում շատ նուրբ կերպով ազգային ավտոնոմիան, գուցե և ֆեդերացիան»։[1]

[1] Ս. Սպանդարյան, հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 57։

Մերկացնելով դաշնակցության գործելակերպը, Սպանդարյանը գրում է. «Դուք, պարոններ, գրեցեք կոնդակներ, ուղարկեցեք որդիական շնորհակալություններ կաթողիկոսին. թարգմանեցեք սաղմոսները և շարականները գրաբարից աշխարհաբար, նառեցեք տերտերների երկրորդ ամուսնության նշանավոր խնդրի մասին, ընտրեցեք երեցփոխներ և շատ այլ ազգօգուտ գործերով զբաղվեցեք, բայց դուք մի սրբապղծեք սոցիալիզմի վեհ դաղափարը, թողեք հայ բանվորին, մի խոսեք դասակարգային կռվի մասին—դա մազալու և միանգամայն ծիծաղելի է»[1].

Բոլշևիկները բոյկոտեցին «ազգային Սահմանադիր ժողովը» և չնայած ընտրություններն անցան դաշնակների արյունալից տեռորի ու ստոր խարդախությունների պայմաններում, այնուամենայնիվ նրանք շատ չնչին ձայներ շահեցին։ Մասսաները դնացին բոլշևիկների հետևից և ինչպես Ստ. Շահումյանն է ասում՝ դաճաճ դաշնակցությունը, որն իրեն «գոռոզ առյուծ էր» կարծում, խղճալի «մուկ» դարձավ[2]։ Այդ էր դաշնակցական բաշիբոզուկների ու ավանտյուրիստների վախճանը՝ նրանց տխրահռչակ «ազգային ժողովի» կամպանիայում։

Դաշնակցության նացիոնալիստական քաղաքականությունն ու ավանտյուրիստական տակտիկան իր ամբողջ հրեշավորությամբ դրսևորվեց «Թյուրքահայ գատիս» հարցում։ Իր գոյության հենց սկզբից՝ 19-րդ դարի 90-ական թվականներից դաշնակցությունը խաղալով հայ ժողովրդի ազգային զգացմունքների հետ և սպեկուլյացիայի ենթարկելով Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը, նպատակ ուներ ամենից առաջ հայ ժողովրդին հեռացնել համառուսական ռևոլյուցիոն պայքարից. նրա մեջ ամեն օր ու ժամ նացիոնալիզմի թույն սրսկել։ Դաշնակցականները իրենց հայտարարելով «հայոց հայրենիքի փրկիչներ» յուրաքանչյուր հայից պահանջում էին մոռանալ ամեն մի դասակարգային շահ ու տարբերություն և ճանաչել միայն մեկ ազգային իդեալ—Արևմտյան Հայաստանի «ազատագրումը», ընդորում նրանք այդ այսպես կոչված «ազատագրումը» կապում էին արևմտա-եվրոպական պետությունների «օգնության ու հովանավորության» հետ։ Իրենք՝ դաշնակցականները կազմակերպում էին հայդուկային ջոկատներ, որոնց կատարած ավանտյուրիստական գործողությունները հայ ժողովրդին կանգնեցնում են հազարավոր նոր զոհերի առաջ։ Ավելին, նրանք դաշնակցեցին երիտասարդ թյուրքերի հետ և դարձան հայերի բնաջնջման ակտիվ մասնակիցներ։

Բոլշևիկները վճռականորեն մերկացրել են դաշնակցության այդ ազգակործան քաղաքականությունը։ Սպանդարյանը իր մի շարք հոդվածներում ցույց է տվել, որ արևմտյան պետությունները դարձել են միջազգային ռեակցիայի պատվար և հայ ժողովրդի ազատագրումը կապել «ենենդամիտ Ալբիոն» Անգլիայի, պարազիտ Ֆրանսիայի կամ գիշատիչ Ամերիկայի հետ. այդ նշանակում է գնալ բացահայտ կործանման ուղիով։ Արևմտյան հայերի ազատագրման դաշնակցական ծրագիրը հենց այդպիսի ողբերգական ծրագիր էր։ Ստ. Շահումյանը դաշնակցության «Թյուրքահայ ավանտյուրան» համարել է «հայ ազգային ռեակցիայի... ոգերվը, որն այն-

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 41։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 208։

քան վնաս է հասցրել Կովկասի հայ բնակչությանը, այնքան վիշտ ու տառապանք է պատճառել թյուրքահայությանը և այնքան անգնահատելի ծառայություն է մատուցել հայ բուրժուազիային»[1]։

Դաշնակցական ավանտյուրիստներն առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին ստեղծեցին այսպես կոչված հայկական կամավորական խմբեր՝ կովկասյան ռազմաճակատում գործելու համար։ Դա ոչ միայն չօգնեց արևմտյան հայերի ազատագրմանը, այլ օժանդակեց ու արագացրեց նրանց բնաջնջումը թյուրքական բռնակալների կողմից։ Բոլշևիկները, որոնք պաշտպանում էին իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգը և խնդիր էին դրել ռևոլյուցիոն ճանապարհով տապալել ցարիզմն ու կապիտալիզմը, դատապարտեցին թալանչիական պատերազմի ամեն մի ազգայնական-հայրենասիրական մոլուցք ու «կամավորական շարժում»։ Ստանալով հայկական եղեռնի լուրը, սիբիրյան աքսորում գտնվող Սուրեն Սպանդարյանը 1915 թվականի իր նամակներից մեկում, անարգանքի սյունին գամելով դաշնակցականներին, գրում է. «Այդ ինչեր են կատարվում այդտեղ։ Վայ էն ազգին, որի ճակատագիրը վճռում են ծակ փիլիսոփա Վարանդյանը... և «ազգային», բայց առանց տաղանդի փաստաբան, տիպիկական ֆիլիստեր Սամսոն Հարությունյանը։ Մի՞թե ժամանակը չէ, մի՞թե մարդիկ չկան, որ այդ ոճրագործների վրին տան և այն չնչինը, որ գնո՞ ենացել է՝ ազատեն, պահպանեն։ Սիրտս այրվում է, էլ չգիտես քանի անգամ սկսել եմ գրել։ Բայց ինչ արած, աքսարեզը, մամուլը և ուժը, պոլիցիական ուժը նրանց կողմն է։ Ես հենց սկզբից գիտեի, որ պիտի կատարվի ողբերգություն, գրել էի Բաքու, առաջարկելով մի որևէ բան գործել այդ ժողովրդասպանների դեմ...»[2]։

Նկատենք, որ 1915 թվականի հոկտեմբերին Բաքվում հրավիրված Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերենցիան, Ստեփան Շահումյանի գլխավորությամբ, իր որոշումներում մանրամասնորեն կանգ առավ նաև ազգային հարցի վրա ու դատապարտեց հայկական բուրժուազիայի ու դաշնակցության պարտիայի ավանտյուրիստական քաղաքականությունը[3]։

Հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները և հայկական ջարդերի հանցավորներն են ինչպես թյուրքական բռնակալները, գերմանական, անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստները, այնպես էլ նրանց ստոր գործակալները հանդիսացող դաշնակցականները՝ իրենց արևմտյան օրիենտացիայով, ավանտյուրիստական քաղաքականությամբ ու անասնական նացիոնալիզմով։

Եթե հաշվի առնենք, որ Անդրկովկասի հայկական բուրժուազիան, վրացական ազնվականությունը և ադրբեջանական բեգերը ցարական իշխանությունների առաջ լակեյարար ծառայելու իրենց մրցավազքով ևս փորձում էին ազգային թշնամանք բորբոքել Անդրկովկասի ժողովուրդների միջև և նրանց հեռու պահել Ռուսաստանում հասունացող համաժողովրդական ոևո-

---

1 Ս. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 228։

2 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 343—344։

3 Տես „Большевики в годы империалистической войны". Сборник документов. Москва, 1939, стр. 53.

լյուցիայից, ապա լրիվ հասկանալի կլինի դաշնակցական դարշանքի ողջ զազրելիությունն ու նողկալիությունը։

Սպանդարյանն իր անձնուրաց պայքարով խոշոր դեր կատարեց դաշնակցության մերկացման ու ջախջախման գործում և օգնեց Անդրկովկասի ժողովուրդներին ու հատկապես հայ ժողովրդին՝ իր ձայնը միացնելու ռուս մեծ ժողովրդի հետ և մասնակցելու այն համատեղ պայքարին, որը ռուսական պրոլետարիատի ղեկավարությամբ կործանեց ցարիզմն ու կապիտալիզմը Ռուսաստանում։

Անդրկովկասի բոլշևիկները ընկեր Ստալինի գլխավորությամբ վճռական պայքար էին մղում նաև բուրժուա-նացիոնալիստական մյուս պարտիաների ու խմբավորումների դեմ։ Հայ իրականության մեջ այդպիսիներից էին «սպեցիֆիկները», «հնչակյանները» և այլն։

1903 թվականին հայ բուրժուա-նացիոնալիստական արկածախնդիր գրչակների մի շայկայից ստեղծվեց այսպես կոչված «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը», որը նպատակ ուներ հայ բանվորներին կտրել մյուս ազգությունների բանվորներից և ջլատել կովկասյան միասնական ռևոլյուցիոն շարժումը։ Երանք տխրահռչակ «սպեցիֆիկներն» էին, որոնք դաշնակցականների նման փորձում էին բուրժուազիայի շահը ներկայացնել որպես համազգային շահ։

«Սպեցիֆիկների» կազմակերպությունն ուներ ռեակցիոն, նացիոնալիստական բնույթ և կոչված էր հավերժացնելու բուրժուազիայի իշխանությունը բանվորների վրա։ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը հենց սկզբից մերկացրին այդ «բունդական կրեատուրան»[1] և կոչ արին Անդրկովկասի բոլշևիկներին՝ ջախջախել այն։ Այդ տեսակետից վճռական նշանակություն ունեցավ ընկեր Ստալինի «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» աշխատությունը։

Այնտեղ ցույց է տրվում, որ «սպեցիֆիկներն» ամբողջովին ընդօրինակում են «Բունդի կազմակերպական ու քաղաքական հայացքները» և գործին նայում են ֆեդերալիստական-նացիոնալիստական տեսակետից։ Նրանց նպատակն է հայ աշխատավորությանը ենթարկել կապիտալիստներին։ Մինչդեռ բոլշևիկները վարում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու անհաշտ դասակարգային պայքարի քաղաքականություն և բոլոր ազգերի աշխատավորներին տանում դեպի համառուսական ռևոլյուցիա՝ ընդդեմ ցարիզմի ու կապիտալիզմի։

Զինված Լենինի և Ստալինի ղեկավար ցուցումներով՝ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը անդուլ ու անողոք պայքար էին մղում «սպեցիֆիզմի» մերկացման ու ջախջախման համար։ Նրանք ամենից առաջ ցույց տվին, որ բուրժուա-նացիոնալիստական սպեցիֆիկյան «օրապակաս» կազմակերպությունը ոչ մի կապ չունի բանվորական շարժման հետ։ «Սպեցիֆիկները»—«այդ առանց բանակի գեներալները»[2] ոչ մի նոր բան չասացին ազգային հարցում և գերադասեցին ստորաքարշությամբ կրել իրենց ավտրիական ու հրեական ուսուցիչների հնամաշ գլխարկները։ Ստ. Շահումյանը հողմացրիվ արեց «սպեցիֆիկներից» դավանած «կուլտուր-ազգային

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 34, էջ 383։

2 «Կայծ», № 31, 1906։

ավտոնոմիան» և մերկացրեց նրանց պարագլուխ, ճոռոմախոս ու դատարկասլորտ, «ազգասեր» միրացուն», բուրժուազիայի պնակալեզ Դ. Անանունին։

Սպանդարյանը Շահումյանի հետ միասին պաշտպանեց բոլշևիկների ազգային ծրագիրը ազգերի ինքնորոշման իրավունքի մասին և կտրականապես մերժեց «սպեցիֆիկներից» ու այլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քարոզած կուլտուր-ազգային ավտոնոմիան։ Աքսորից 1913 թվականին գրած նամակներից մեկում Սպանդարյանը ուղղակի հայտարարում է. «Վճռականապես պայքարում եմ ավտոնոմիայի դեմ»[1]։ Կուլտուր-ազգային ավտոնոմիան բուրժուա-նացիոնալիստական, ռեֆորմիստական ծրագիր էր, որ ժխտում էր ազգերի քաղաքական, տնտեսական, տերիտորիալ անկախությունն ու ազատությունը, առանց որոնց չէր կարող լինել նաև կուլտուրական զարգացում։

Ս. Սպանդարյանը «Ինքնառեկլամի նոր միջոց» մարտական հոդվածում սպանիչ ծաղրի է ենթարկում «սպեցիֆիկներից» մյուս լիդեր Բ. Իշխանյանին, որը բուրժուազիային ծառայելու համար չէր վարանում և ոչ մի միջոցի առաջ։ Նա հայտնի էր որպես բախտախնդիր, քրեական տիպ, գրական աֆերիստ։ Մերկացնելով ինքնառեկլամի սիրահար այդ գրագողին, Սպանդարյանը գրում է. «Լինում են մարդիկ, որոնց կաշին այնքան հաստ է, որ ոչնչով չես կարող ծակել... Նույն այդ կարգին է պատկանում նաև Բ. Իշխանյանը»։

Բոլշևիկների պայքարը «սպեցիֆիզմի» դեմ վերջացավ վերջինիս խայտառակ ջախջախումով։

Բանվորական շարժման միասնության համար վտանգավոր էին նաև «հնչակյանները», որոնց Ստ. Շահումյանը անվանեց «քաղաքական» ստահակների շայկա[2]։ Սպանդարյանն անողոք պայքար է մղել նրանց դեմ և ցույց տվել, որ «հնչակյանները» պրոլետարիատին հեռացնում են դասակարգային կազմակերպված պայքարից։ Շնորհիվ բոլշևիկների եռանդուն գործունեության՝ «հնչակյանները» ոչ մի ազդեցություն չունեցան բանվորական շարժման վրա։ „Гудок"-ի թղթակիցը մերկացնելով «հնչակյաններից» կեղծ սոցիալիզմը գրում է. «Այդ պարոններն իրենց մեծարում են որպես սոցիալ-դեմոկրատներ, մինչդեռ նրանք այնքան ընդհանրություն ունեն սոցիալ-դեմոկրատիայի հետ, որքան ընթերցող, մենք և դուք՝ Տիրեթի դալայ-լամայի հետ»[4]։

Բոլշևիկների պայքարը ուղղված է եղել բոլոր ազգերի նացիոնալիստների դեմ, որոնք տարբեր կողմերից հետապնդում էին միևնույն նպատակը՝ ջլատել Ռուսաստանի ժողովուրդների միասնությունը, ձախողել նրանց համատեղ պայքարը ցարիզմի դեմ։

Ս. Սպանդարյանը անհաշտ է եղել նաև դեպի վրացական ֆեդերալիստներն ու մենշևիկները, ադրբեջանական պանիսլամիստներն ու մուսավաթականները։ «Բուրժուական մամուլը և սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակը» հոդվածում Սպանդարյանը մերկացնելով վրացական նացիոնա-

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 333։
[2] Նույն տեղում, էջ 269։
[3] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 236։
[4] „Гудок", № 29, 1908, 26 апреля, Баку.

լիստներին, որոնք իրենց տերերին՝ բուրժուաներին ու կալվածատերերին հաճոյանալու և աշխատավորներին փարելու համար զանազան գույներ էին ընդունում, գրում է. «Չի կարելի պարոններ, այդքան այլազան լինել։ Ձեր «բլոկը» և... ծրագիրը... հիշեցնում են մանրավաճառի խանութը—ամեն բանից մի կտոր. և՛ սոցիալիզմ, և՛ շովինիզմ, և՛ հանրապետություն, և՛ սահմանադրական միապետություն և որպես հավելված՝ վրաց եկեղեցու ինքնագլխություն»[1]։

Հետևելով Լենինի ու Ստալինի ցուցումներին Ս. Սպանդարյանը մերկացնում էր բուրժուական գրչակների այն անհեթեթությունը, թե իբր՝ այս կամ այն ազգի նացիոնալիզմը «առողջ է», «օգտակար» ընդդեմ մյուս ազգի։ Այդ էին քարոզում նաև հայկական, վրացական, ադրբեջանական նացիոնալիստները, որպեսզի իրենց շուրջը համախմբեն ժողովրդական մասսաներին և նրանց ծառայեցնեն իրենց շահադիտական նպատակների համար։ Բոլշևիկները ուսուցանում էին, որ բոլոր ազգերի աշխատավոր մասսաների շահերը միևնույն են և պետք է անողոքաբար ջախջախել նացիոնալիստներին, որպես ժողովրդի ոխերիմ թշնամիների։

Սպանդարյանը նացիոնալիզմի դեմ պայքարել է նաև միջազգային մասշտաբով։ Նա խարազանել է 2-րդ ինտերնացիոնալի օպորտունիզմն ու շովինիզմը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սպանդարյանը լենինյան ինտերնացիոնալիստական գիրք է գրավում պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի հարցերում։ Ընկեր Ստալինը իր մարտական զինակցի հետ միասին սիբիրյան աքսորից 1915 թ. փետրվարին Վ. Ի. Լենինին գրած համատեղ նամակում նշավակում է 2-րդ Ինտերնացիոնալի սոցիալ-շովինիստներին։ Նամակի վերջում ընկեր Ստալինը Սպանդարյանի անունից գրում է. «Տիմոֆեյը խնդրում է իր թթու ողջույնը հաղորդեք Դեդին, Սամբային և Վանդերվելդեին՝ նրանց փառապանծ, հա-հա, մինիստրական պոստերում»[2]։

Սպանդարյանը մերկացրել է ցարիզմի, մեծապետական շովինիզմի քաղաքականությունը, որի հետևանքով գաղութային ճնշման են ենթարկվել ոչ-ռուս ժողովուրդները, զրկվել մայրենի լեզվով գիր ու գրականություն զարգացնելու հնարավորությունից։ Ցարական կառավարող շրջանները վարելով վայրի նացիոնալիզմի քաղաքականություն, կազմակերպել են ազգային ջարդեր ու կոտորածներ։ Սպանդարյանը անարգանքի սյունին է գամում մոնարխիստ ու մոլի շովինիստ, «բեսարաբիական խեղկատակ» Պուրիշկևիչին, որը հրեային, հային և ոչ-ռուս ժողովուրդներին անվանում է «պալարդ»։ Ցարական ինքնակալության հարազատ զավակն էր սև-հարյուրակային դուման, որը ոտնահարում էր Ռուսաստանի ժողովուրդների նաև կրոնական զգացմունքները։

Նացիոնալիզմի քաղաքականությունը ցարիզմին և շահագործող դասակարգերին պետք էր ժողովուրդների ուշադրությունը դասակարգային պայքարից, ռևոլյուցիայից շեղելու համար։ Նվաճողական ձգտումների հետ միասին դրան էր հետապնդում նաև ցարիզմի արտաքին քաղաքականու-

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 10—11։
[2] „Пролетарская революция", ժուռնալ № 7, 1936, էջ 167։
[3] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 290։
[4] Նույն տեղում, էջ 210։

թյունը, որի դևիզն է եղել «արտաքին խառնաշփոթություններով խեղդել ներքին դժգոհությունը, խեղդել ազատագրական շարժումը»[1]։ Ժողովուրդների ազատագրական շարժումը ճնշելու գործում ցարիզմն ու եվրոպական ռեակցիան գնում էին ձեռք-ձեռքի տված։ Սպանդարյանը խարազանելով արևմտյան գիշատիչ պետությունների ռեակցիոն դերը, ընդգծում է. «Այն օրը, երբ եվրոպական ռեակցիոն կառավարությունները կհայտարարեն պատերազմ ռուսական հեղափոխության—այդ օրը նրանք կհրատարակեն կռիվ և իրենց ժողովուրդների դեմ. այդ մոմենտից կսկսվի միջազգային սոցիալիստական հեղափոխությունը»[2]։

Սպանդարյանը ցույց է տալիս, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդները ռուսական պրոլետարիատի ղեկավարությամբ պետք է իրենց հակադրեն տիրող կարգերին և վճռական ու համատեղ պայքարի դուրս գան ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։

Սպանդարյանի պայքարը նացիոնալիզմի դեմ դրսևորվել է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև կուլտուրայի ասպարեզում։ Արականությանը, մամուլին, ժուռնալիստիկային, արվեստին, ժողովրդական կրթությանն ու լուսավորությանը նվիրված իր բազմաթիվ հոդվածներում Սպանդարյանը առաջնորդվել է լենինյան-ստալինյան պարտիականության սկզբունքով և ամենից առաջ ընդգծել այն միտքը, որ կուլտուրան իր բոլոր ճյուղերով պետք է ի սպաս դնել ժողովրդի շահերին։

Սպանդարյանը ճիշտ էր հասկանում Լենինի հանճարեղ դրույթը, որ ամեն մի ազգային կուլտուրայի մեջ կա երկու կուլտուրա—բուրժուական և դեմոկրատական, սոցիալիստական։ Այս առումով էլ Սպանդարյանը մերկացնում է բուրժուա-նացիոնալիստական այսպես կոչված «միասնական հոսանքի» կեղծ թեորիան, որը խոսում էր ինչ-որ «համազգային ներդաշնակ կուլտուրայի» մասին և այն համարում «ապադասակարգային» ու «կոսմոպոլիտական»։ Մինչդեռ, ըստ էության, «ազգային կուլտուրայի» քարոզը կապիտալիզմի պայմաններում ունի բուրժուական բովանդակություն։ «Բոլոր ազգերի բուրժուազիան և՛ Ավստրիայում և՛ Ռուսաստանում, «ազգային կուլտուրայի» լոզունգի տակ գործնականում անց է կացնում բանվորների մասնատում, դեմոկրատիայի ուժազրկում, չարչիական գործարքներ ճորտատերերի հետ՝ ժողովրդական իրավունքները և ժողովրդական ազատությունը վաճառելու վերաբերյալ»[3]։

Զինված լենինիզմի գաղափարներով, Սպանդարյանը ցույց է տալիս, որ բուրժուական կուլտուրան ունի ռեակցիոն բնույթ, քանի որ նրա չափանիշը մերկ շահն է։ Գերշահույթ քամելու համար բուրժուական ողջ կուլտուրան կոչված է տգիտության ու խավարի մեջ պահել ժողովրդական մասսաներին։ Սպանդարյանը մերկացնելով բուրժուական այլասերված ու նեխված կուլտուրան գրում է. «Բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառնում է ապրանք, ծախու առնելու առարկա և այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլև մտա-

---

1 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 48։
2 Նույն տեղում, էջ 54։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 20, էջ 6։

վոր, ոչ-նյութական բաները՝ գիտություն, տաղանդ, շնորհք և այլն»[1]։ Անվեհեր բոլշևիկի այս մարտական խոսքերը նոր ուժով են հնչում այժմ, երբ կապիտալիստական սիստեմը՝ ամերիկյան իմպերիալիզմի գլխավորությամբ լիովին ամլացել է և բուրժուական կուլտուրան ներկայանում է միջնադարյան խավարամտության ու մարդակերական իդեոլոգիայի տեսքով։

Սպանդարյանը ցույց է տալիս, որ ամեն մի ազգի հպարտությունն է կազմում նրա դեմոկրատական, սոցիալիստական կուլտուրան, որի կրողներն են ժողովրդական մասսաները։ Այս տեսակետից էլ նա բարձր է գնահատում ռուսական առաջավոր գիտությունն ու գրականությունը, որը «ազգային պարծանք է ու գանձարան», բայց դրա հետ մեկտեղ «նվաճել ու գրավել է ամբողջ աշխարհը»։ Նա խոր սիրով ու մեծարանքով է խոսում ռուս ականավոր գրողների մասին և ոչնչացնող քննադատության է ենթարկում ցարական խավարամոլներին, որոնք ձգտում էին պրոլետարական մեծ գրող «Ս. Գորկուն կրունկից կծելու փորձ» կատարել։ Բոլշևիկները ազատաշունչ, ռևոլյուցիոն գրականությունը դիտում էին որպես մասսաների քաղաքական լուսավորման լավագույն միջոցներից մեկը։

Սուրեն Սպանդարյանը դիմակազերծ է անում գրականության միջոցով սոցիալական հակասությունները սվաղելու ամեն մի փորձ։ Այս տեսակետից բնորոշ է նրա գրախոսականը «Տայֆունն» դրամայի մասին։ Սպանդարյանը ցույց է տալիս, որ այդ դրաման իրականությունը ներկայացնում է ծուռ հայելու մեջ, որովհետև այնտեղ անմտություններ են հորինված Յապոնիայի ողջ բնակչության արտասովոր համերաշխության, նրա հեքիաթային հայրենասիրության, հանուն ընդհանուր բարօրության՝ անձնականը զոհաբերելու մասին և այլն։ Մինչդեռ «այդ «տոնական» շիրմայի հետևը Յապոնիայում նույն սոցիալական սրված պայքարն է տեղի ունենում, ինչպես և հին Եվրոպայում»[2]։

Ընդհակառակը Սպանդարյանը բարձր է գնահատում Շիլլերի «Սեր և խարդավանք» դրաման, քանի որ այնտեղ հաջող է տրված սոցիալական հակասությունների պատկերը և «մեր օրերում էլ հարկ է լինում ջերմորեն պայքարելու «մարդու» համար, «մարդկային անձնավորությունը» պաշտպանելու՝ անարգանքից, հասարակական անարդարությունից և ճնշումից»[3]։ Ելնելով այդ դրամայի դաստիարակչական նշանակությունից Սպանդարյանը գոչում է. «Թող ավելի շատ լինեն այդպիսի ներկայացումներ»։

Բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» քննադատությունը և ջախջախումը կարևոր նշանակություն ուներ հայ իրականության համար։ Հայ բուրժուական ու կղերական գրականագիտությունն ու պատմագրությունը հայկական կուլտուրան ու գրականությունը, հայ ժողովրդի ողջ պատմությունը դիտել են «համազգային ներդաշնակության» ակնոցներով և այն վերածել թագավորների ու զորավարների, առանձին անհատների կենսագրությունների մեխանիկական շարադրանքի։ Նրանք անտեսել ու ժխտել են սոցիալական հակասությունները։ Շահումյանը և

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին, Հայպետհրատ, 1949, էջ 115—116։

[2] Նույն տեղում, էջ 93։

[3] Նույն տեղում, էջ 79—80։

Սպանդարյանը ջախջախիչ հարված են հասցրել այդ իդեալիստական պատմահայեցողությանը, որը նպատակ ուներ մոլորեցնել ժողովրդական մասսաներին և նրանց ենթարկել տիրող դասակարգերին։

Ստ. Շահումյանը «Ե. Փափազյանը պատմագետի դերում» նշանավոր աշխատության մեջ ցույց է տվել, որ հայ բուրժուա-նացիոնալիստական պատմաբաններն ու գրականագետները ծառայելով իրենց տերերին, միշտ էլ խոսել են այսպես կոչված «միասնական Հայաստանից», «ընդհանրապես հայերից» մասին և ամբողջ ժողովրդին ներկայացրել «կույր ամբոխից ձևով՝ «իմաստուն» թագավորի կամ կաթողիկոսի գլխավորությամբ։ Մինչդեռ պատմությունը վկայում է, որ Հայաստանում ևս եղել են սոցիալական սուր հակասություններ և ամեն մի դասակարգ այս կամ այն հարցին մոտեցել է իր շահերի տեսակետից։ Ահա թե ինչու գրականագետների ու պատմաբանների խնդիրն է վերարտադրել իրականությունը ճիշտ այնպես, ինչպես նա կա։

Մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական և կղերական հայ մամուլը, Սպանդարյանը ցույց է տալիս, որ նա «գլխավորապես զբաղված է եկեղեցական հարցերով, վանքերի ինտրիգներով և կաթողիկոսի ընարությունների, որ մնացած ողջ բազմազան ու բազմակողմանի կյանքը հորդառոս անցնում է նրա կողքից, թույլ է արտացոլվում կամ բոլորովին չի արտացոլվում նրանում»[1]։ Այդպես են դաշնակցական «ստաիոս, քվազիդեմոկրատական «Հորիզոն»-ը, կադետական ինտրիգան «Մշակ»-ը և կղերական «Հովիտ»-ը, որը հանդիսանում է «մթին գործերի լաբորատորիա»։

Սպանդարյանը և Շահումյանը պայքարել են նաև ազգային «նիհիլիզմի» դեմ։ Նրանք մեծագույն հոգատարությամբ են վերաբերվել դեպի հայ դեմոկրատական, ռևոլյուցիոն գրականության զարգացումը։ Շահումյանը և Սպանդարյանը պայքար ծավալելով նացիոնալիստական հոսանքների ու տենդենցների դեմ, ամեն կերպ օգնում էին պրոլետարական գրականության զարգացմանը։ Սպանդարյանը ըստ արժանվույն գնահատեց անվանի գրող Հ. Հակոբյանին, որը հրաժարվեց «թմբկա-հայրենասիրական» թեմաներից և «խոսեց աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների ու ձգտումների մասին»[2]։

Սպանդարյանը ռևոլյուցիոն կրքոտությամբ պայքարում էր ժողովրդի լուսավորության գործի համար։ Նա հանդես եկավ կովկասյան համալսարան հիմնելու պահանջի պաշտպանությամբ և մերկացրեց ցարական կառավարության ազգատյաց քաղաքականությունը։ Այդ հարցի շուրջն արտահայտվեց նաև բոլշևիկյան «Պրավդա»-ն, որի էջերում Վ. Մ. Մոլոտովը գրել է. «Մայիսի 24-ին մինիստրների խորհուրդում քննարկվեց կովկասյան համալսարան բացելու հարցը։ Ավելի քան 30 տարի կովկասյան բնակչությունը խնդրում է համալսարան բացել Թիֆլիս քաղաքում։ Այդ նպատակի համար արդեն հավաքված է 2 միլիոն ռուբլուց ավելի, և այնուամենայնիվ համալսարան չկա։

Մինիստրների խորհուրդում դեռ չի վերջացել այդ հարցի քննարկումը։ Այնտեղ դեռ լսում են ոստիկանության դեպարտամենտի դիրեկտոր

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին, Հայպետհրատ, 1949, էջ 57։

[2] Նույն տեղում, էջ 20։

պ-րն Զուևի առարկությունները, որը վախենում է, թե կովկասյան համալսարանի բացումով «կրամոլանն» էլ ավելի կամրապնդվի Կովկասում»[1]։

Ս. Սպանդարյանը և Սա. Շահումյանը հայ մարքսիստական գրաքննադատության ու պատմագիտության հիմնադիրներն են։ Նրանց աշխատությունները մինչև այժմ էլ շատ թարմ են հնչում և ունեն կարևորագույն նշանակություն բուրժուական «միասնական հոսանքից» կեղծ թեորիայի ռեցիդիվների հաղթահարման ու լիկվիդացման գործում՝ սովետահայ գրականագիտության ու պատմագիտության մեջ։

Բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքից» կեղծ թեորիայի մերկացման ու ջախջախման գործում կարևոր տեղ են բռնում Սուրեն Սպանդարյանի հայացքները հայկական լիբերալիզմի մասին։ Նա, զինված մարքս-լենինյան ստեղծագործական թեորիայով, պահանջում էր պատմական կոնկրետ մոտեցում ունենալ դեպի տարբեր երկրների լիբերալիզմը։ «Ուրվագրեր հայկական կյանքից» աշխատության մեջ Սպանդարյանը խոսելով «լիբերալիզմ», «պահպանողականություն» և այլ արտահայտությունների գործածման մասին գրում է. «Յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր ժողովրդի մեջ բոլոր այդ տերմինները պետք է կիրառվեն պատշաճ զգուշավորությամբ, ուշադրության առնելով պատմական տեսակետը»[2]։

Եվ իրոք Լենինն ու Ստալինը ցույց են տվել, որ եթե պատմական կոնկրետ պայմանների զարգացման հետևանքով «ֆրանսիական ռևոլյուցիայի մեջ լիբերալ բուրժուազիան ռևոլյուցիոն դեր էր խաղում», ապա Ռուսաստանում «լիբերալ բուրժուազիան և նրա պաշտպան կադետները ռեակցիայի դաշնակիցներն են, դրանք ռևոլյուցիայի «լուսավորյալ» թշնամիներն են»[3]։ Բուրժուական լիբերալ շարժումը Ռուսաստանում հասցրեց կադետական պարտիայի ստեղծման, որի մասին Լենինն ասել է. «Կ.-դ.-ն» անունը հնարված է պարտիայի միապետական բնույթը թաքցնելու համար»[4]։ 1912 թվականին գրած «Կարիերա» հոդվածում Լենինը խոսելով ռուսական լիբերալիզմի էվոլյուցիայի մասին՝ սկսած 19-րդ դարի 60-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկիզբը, տալիս է Կատկով—Սուվորին—«վեխականներ» սխեման, որով լիովին ակնհայտ է դառնում ռուսական լիբերալ բուրժուազիայի կատարյալ ռեակցիոնությունը։ Նա մշտական գործարքի մեջ է եղել ցարիզմի հետ՝ ընդդեմ ժողովրդական մասսաների ու հասունացող ռևոլյուցիայի։

Պատահական չէ, որ Սպանդարյանը «հրեշավոր, գարշելի ու արյունոտ ցարիզմը» համարել է «ֆեոդալիզմի ու բուրժուազիայի... հակարնական կոնկուբինատ»[5]։

Ռուսական լիբերալ բուրժուազիայի կրտսեր պարտնյորն էր հայկական լիբերալ բուրժուազիան։ Հայկական բուրժուական լիբերալիզմի էվոլյուցիան կարելի է արտահայտել Նազարյան—Արծրունի—հայ կադետներ գծով, որը միահյուսվեց դաշնակցության հետ։ Լենինը ցույց է տվել, որ ռուսական լիբերալ բուրժուական մամուլը ներծծված է եղել շովինիզմով

---

[1] „Правда", № 23, 26 мая (8 июня), 1912 г.

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 164։

[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 6—7։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 625։

[5] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 96։

ու կատաղի սև-հարյուրականությամբ, կոչված էր ստրկական հոգի պատվաստել մասսաների մեջ և ցարիզմի առաջ կոտարած իր ստորաքարշությամբ ձեռք է բերել «Ի՞նչ եք հրամայում» տխրահռչակ տիտղոսը[1]։ Լենինյան այս սպանիչ խոսքերը վերաբերում են նաև հայ լիբերալ բուրժուական մամուլին, որի ցայտուն խտացումն էր «Մշակ»-ը։

Ահա թե ինչու Շահումյանը և Սպանդարյանը մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» կեղծ թեորիան ցույց են տվել, որ այն մի կողմից ժխտում է դեմոկրատական, ռևոլյուցիոն թևի գոյությունը հայ հասարակական կյանքում, իսկ մյուս կողմից մինչև երկինք է բարձրացնում հայ լիբերալներին։ Այլ կերպ էլ չի կարող վարվել բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը, որն իդեոլոգիական զենք է տիրող շահագործողական դասակարգի ձեռքին իր իշխանությունն ամրապնդելու համար։ Չտեսնել այդ, նշանակում է ցուցաբերել լիակատար քաղաքական կուրություն։ Շահումյանը և Սպանդարյանը ցույց են տվել, որ ոչ մի սկզբունքային տարբերություն չկա հայ կադետ-մշակականների և դաշնակցական-դրոշակական-հորիզոնականների միջև։ Նրանք երկուսն էլ ծառայում են բուրժուազիային և հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներն են։ Այդ առթիվ Շահումյանը դեռևս 1906 թվականին բոլշևիկյան «Կայծ» թերթում գրել է. «Մշակական և դրոշակական—դրանք, չնայած իրենց փոխադարձ հայհոյանքներին, միևնույն մեդալի երկու կողմերն են, միևնույն բուրժուազիայի հարազատ զավակները, այն միակ տարբերությամբ թերևս, որ նրանց մի մասը սիրահար է քնքուշ ժպիտների, մյուսը բռունցքի ու վառոդի։

10—15 տարիների ընթացքում Դրոշակը եղել է «Մշակի» արտասահմանյան հրատարակությունը։ Առանց խանգարելու միմյանց, նրանք ծառայել են միևնույն բուրժուական գործին, աշխատել են խեղդել կովկասահայերի մեջ ամեն մի ռևոլյուցիոն ինքնագործունեություն և թունավորել են հայ բանվորության հոգին ու գիտակցությունը»։

Հայկական բուրժուական լիբերալիզմի այս գնահատականը ուղեցույց է մեր իդեոլոգիական ֆրոնտի բոլոր աշխատողների համար՝ լրկվրդացնելու սովետահայ պատմագիտության ու գրականագիտության մեջ տեղ գտած այն ոչ-մարքսիստական կոնցեպցիան, որով մեծարվում կամ գերագնահատվում է հայկական լիբերալիզմը։

Մեր որոշ պատմաբաններ ու գրականագետներ տարվելով հայ լիբերալ բուրժուազիայի առևտրա-արդյունաբերական ու կուլտուր-կրթական շահագիտական գործամոլությամբ, որն, ի հարկե, նպաստում էր կապիտալիզմի զարգացմանը, անտեսում կամ ստվերի տակ են թողնում նրա քաղաքական կողմը՝ թշնամությունը ռևոլյուցիայի նկատմամբ և շահագործողական ռեժիմի ջատագովումը։ Ոմանք կարծես դեմ չեն ճանաչելու դեմոկրատական ռևոլյուցիոն ուղղության գոյությունը, բայց միաժամանակ փորձում են գերագնահատել հայկական լիբերալիզմի դերը։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 18, էջ 313։

2 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 195—196։

Նա, ով հայ հասարակական կյանքում դեմոկրատական, ռևոլյուցիոն, բոլշևիկյան ուղղությունն ընդունում է որպես ժողովրդական մասսաների շահերը պաշտպանող միակ ուղղություն, պետք է ցույց տա, որ հայ բուրժուազիան և հայկական լիբերալիզմը եղել են հայ աշխատավորության թշնամիները։ Երբեք ու երբեք չպետք է մոռանալ ընկեր Ստալինի գեկավար ցուցումը, որ «սկզբունքային բնույթի հարցերում չկա և չի կարող լինել «միջին» գիծ։ Կամ մեկ, կամ մյուս սկզբունքը պետք է պարտիայի աշխատանքի հիմք դարձնել։ Սկզբունքային հարցերում «միջին» գիծը ուղեղներն աղբոտելու «գիծ» է, տարաձայնությունները սրողելու «գիծ» է, պարտիայի գաղափարական վերասերման «գիծ», պարտիայի գաղափարական մահվան «գիծ»։

Այսպիսով, Լենինի-Ստալինի պարտիայի ականավոր գործիչ Սուրեն Սպանդարյանը միշտ և ամենուրեք ռևոլյուցիոն մեծագույն կրքոտությամբ վճռական պայքար է մղել բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների քայքայիչ գործունեության ու նրանց ռեակցիոն հայացքների դեմ։ Սպանդարյանի այդ պայքարը համակված է եղել պրոլետարական ինտերնացիոնալիզմով և ծառայել է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի մեծ գործին։

* * *

Զինված մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ թեորիայով, Սուրեն Սպանդարյանը ընդգծում էր, որ Ռուսաստանում գլխավոր հարցը ցարիզմի և ապա կապիտալիզմի տապալումն է։ Պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակը կլուծի նաև ազգային հարցը։ Ուստի բոլոր ազգությունների ժողովրդական մասսաները, որոնք ունեն միատեսակ շահեր, պետք է միասնական ճակատով ռևոլյուցիոն պայքարի դուրս գան շահագործողական կարգերի դեմ։ Այդ վերաբերում է նաև կովկասյան ժողովուրդներին, որոնց Սպանդարյանը համատեղ կովի կոչ է անում։ «Կովկասում բնակվող բոլոր ազգությունների ստորին խավերը միմյանց հետ ամրապես զոդված են նյութական կարիքի այն կապերով, որոնք ընդհանուր են նրանց բոլորի համար։ Երա լավագույն ապացույցն են ընդհանուր-պետական բնույթի այն իրագործությունները, որոնք պետք եղածից էլ պարզ ցույց տվին բոլոր ազգությունների ժողովրդական մասսաների շահերի ընդհանրությունը և այստեղից բխող՝ գործողության ընդհանրությունը»[2]։

Սպանդարյանը մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և հատկապես դաշնակցության կործանարար արևմտյան օրիենտացիան, ցույց է տալիս, որ ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրումը կապված է ռուս մեծ ժողովրդի, Ռուսաստանում ծավալվող համաժողովրդական ռևոլյուցիայի հաղթանակի հետ։ Ուստի հայ գիտակից պրոլետարիատի և աշխատավորության մեծագույն խնդիրն ու սրբազան պարտականությունն է «միացյալ ուժերով Ռուսաստանի պրոլետարիատի հետ անողոք կռիվ մղելու բռնակալության դեմ»[3]։ Սպանդարյանը

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 9, էջ 6։

2 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 223։

3 Նույն տեղում, էջ 31։

բոլոր հնարավոր միջոցներով ցույց է տվել ռուս ժողովրդի, ռուսական պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի բարերար, ազատարար նշանակությունը բոլոր ժողովուրդների համար։

19-րդ դարի վերջից և 20-րդ դարի սկզբից հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ սկսվում է նոր շրջան, որն անխզելիորեն կապված է Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն պայքարի և պրոլետարիատի մարքսիստական պարտիայի ստեղծման հետ։ Անդրկովկասյան ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան և ապա բոլշևիկյան կազմակերպությունները՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ ժողովրդական մասսաներին ամբողջովին կողմնորոշում ու առաջնորդում են դեպի համառուսական ռևոլյուցիան, դեպի ռուս մեծ ժողովրդի հերոսական պայքարը, դեպի ռուսական պրոլետարիատը։ Այդ մեծ պայքարում ընկեր Ստալինի մերձավորագույն զինակիցներն էին Սուրեն Սպանդարյանը, Ստեփան Շահումյանը, Անաստաս Միկոյանը։

Զինված Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան դրույթներով, Սպանդարյանը պայքարում էր բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն դաշինքի ամրապնդման համար, որպես ցարիզմի տապալման գլխավոր նախապայման։ Միաժամանակ նա ցույց էր տալիս, որ ռևոլյուցիայի հաղթանակի համար պետք է անպայմանորեն ապահովել պրոլետարիատի հեգեմոնիան։ Պրոլետարիատն է ռևոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժը, նա է իր շուրջն համախմբում գյուղացիությանը ու բոլոր ճընշված ժողովուրդներին և վճռական գրոհով կործանում ցարիզմը և ապա կապիտալիզմը։

Այդ բոլորի կազմակերպիչն ու ղեկավարը ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան է, կոմունիստների պարտիան։ Պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ Սուրեն Սպանդարյանը անդուլ կերպով պայքարում էր Լենինի-Ստալինի պարտիայի ամրապնդման համար, պարտիա, որը հանդիսանում էր պրոլետարիատի ազատագրական պայքարի քաղաքական ղեկավարն ու մարտական շտաբը։ Սպանդարյանի համար պարտիայի—ժողովրդի—ռևոլյուցիայի շահը բարձր էր ամեն ինչից։ Նա պայքարում էր ժողովուրդների ազատագրման մեծ միսիայի համար։

Անվեհեր բոլշևիկը մեծագույն հավատով էր լցված դեպի ապագա հաղթանակը։ Վերա Շվեյցերը պատմում է, որ «մահանալիս էլ նա մտածում էր միշտ այն մասին, ինչին տվել է իր սքանչելի կյանքն առանց մնացորդի։ Նա խնդրում էր ինձ գրել Ստալինին, որ ռևոլյուցիան Ռուսաստանում արդեն հասունացել է, որ ցարական բանակը քայքայվում է, որ ռևոլյուցիան կանգնած է 17 թվականի շեմքին...»։ Այդ միտքն ազատ չէր թողնում նրան։ ... Հոդևարքի ժամին, զառանցանքի մեջ նա կրկնում էր «Կանգնեցնեք Լենինի գրոշի տակ»[1]։

Դժբախտաբար Սպանգարյանը չտեսավ ռևոլյուցիայի հաղթանակը և մահացավ 34 տարեկան հասակում՝ իր գործունեության բուռն ծաղկման շրջանում։ Սպանդարյանի մահը մեծ կորուստ էր Կոմունիստական պարտիայի համար։ Լենինը պարտիայի կենտրոնական օրգան „Социал-демократ"-ում գեռնդից հատուկ նեկրոլոգ, որի մեջ տրվում է Սպանդարյանի

[1] „Комсомольский пропагандист и агитатор", № 13, 1937.

անխոնջ աշխատանքի պատկերը և մատնանշվում, որ «նա հավատարիմ է մնացել ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի լավագույն տրադիցիաներին, ոչ մի բոպե չտատանվելով ինտերնացիոնալիզմի դիրքերից»[1]։ Սատանալով Սպանդարյանի մահվան լուրը, ընկեր Ստալինը Վ. Շվեյցերին գրած իր հուզիչ նամակում ասաց. «Սուրենին մենք չենք մոռանա—մի վհատվեք», «Աշխատեցեք ռևոլյուցիայի համար այնպես, ինչպես աշխատում էր Սուրենը»[2]։

Սպանդարյանը զոհ գնաց ցարիզմի դժնդակ պայմաններին, բայց այն գործը, որի համար նա մարտնչում էր՝ հաղթանակեց։ Դա Լենին-Ստալինի պարտիայի անպարտելի գործն է, որը մեր Հայրենիքին բերեց ազատություն ու երջանիկ կյանք։

Սպանդարյանը լիովին համոզված էր, որ պրոլետարիատի հաղթական ռևոլյուցիան ոչ միայն կկործանի շահագործողական ռեժիմը, այլև կսրբիկտանի բուրժուական-նացիոնալիզմի աղտեղությունը։ Նա՝ խոսելով հայ ժողովրդի երդվյալ թշնամու՝ դաշնակցության ապարդյուն «հոխորտանքների» մասին, գրում էր. «Դեմոկրատիզմի հաղթության օրը—կլինի «դաշնակցության» վերջին օրը»[3]։ Սա աննկուն ռևոլյուցիոների ահեղ դատավճռի խոսքեր էին՝ ուղղված փասատորեն բոլոր բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին ու հոսանքներին։

Այդ արդարացի դատավճիռը ի կատար ածվեց։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ազատագրեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, որոնք այժմ կազմում են սոցիալիստական ազգերի միասնական ընտանիքը։ Լենինյան-ստալինյան ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ հայ ժողովուրդը ստացավ ոչ միայն ազատություն, այլև ազգային վերածնունդ։

Սովետական իշխանության հաստատմամբ դաշնակցական ճիվաղները նետվեցին պատմության աղբակույտը։ Նրանք այժմ դարձել են ամերիկյան իմպերիալիզմի ստոր լակեյները և կատաղում են պատերազմի հրձիգների գարշելի դեր։ Սակայն ինչքան էլ մոլեգնեն իմպերիալիստները ու նրանց արգահատելի գործակալները, սոցիալիզմի՝ դեմոկրատիայի ու խաղաղության լագերն անպարտելի է։

Այդ լագերի գլուխ է կանգնած Սովետական Միությունը, ուր ստեղծվել են զարգացման նոր շարժիչ ուժեր—Սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը, ժողովուրդների ստալինյան անխախտ բարեկամությունը, սովետական ջերմ հայրենասիրությունը։ ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը մեր փառապանծ հայրենիքի անպարտելիության աղբյուրն է և գտնվում է Կոմունիստական պարտիայի մշտական ուշադրության կենտրոնում. «Մեր պարտիան,—ասաց ընկ. Ռ. Մալենկովը ՍՄԿՊ XIX համագումարում տված հաշվետու զեկուցման մեջ,—պահպանում է և այսուհետև ևս աչքի լույսի պես կպահպանի ՍՍՌՄ ժողովուրդների միասնությունն ու բարեկամությունը, ամրապնդել և այսուհետև ևս կամրապնդի սովետական բազմազգ պետությունը»[4]։

---

[1] „Социал-демократ", № 56, 1916, 6(19) октября.
[2] Վ. Շվեյցեր, Ստալինը Տուրուխանյան աքսորում, Երևան, 1941, էջ 49։
[3] Գ. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 27։
[4] Գ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարում ՍՄԿՊ կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Հայպետհրատ, 1952, էջ 93։

ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը դեռևս նախահեղափոխական ժամանակներից կերտվել է Լենինի-Ստալինի պարտիայի կողմից։ Ընկեր Ստալինը խոսելով Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մասին, 1921 թվականին ասել է. «Ես հիշում եմ 1905—1917 թվականները, երբ Անդրկովկասի ազգությունների և առհասարակ աշխատավորների մեջ նկատվում էր լիակատար եղբայրական համերաշխություն, երբ եղբայրության կապերը շաղկապում էին հայ, վրացի, ադրբեջանցի և ռուս բանվորներին մեկ սոցիալիստական ընտանիքի մեջ»[1]։ Այդ եղբայրության ու միասնության ստեղծման պատիվը պատկանում է Կոմունիստական պարտիային, որի ականավոր գործիչներից էր Լենինի-Ստալինի հավատարիմ զինակից Սուրեն Սպանդարյանը։ Նա իր ամբողջ կյանքը նվիրաբերեց կոմունիզմի հաղթանակի գործին և այսօր, տարիների ու տասնամյակների վրայով մեզ է նայում նրա անմահ կերպարը։

Սովետական մարդիկ, որոնք կառուցել են սոցիալիզմ և այժմ զինված մեր պարտիայի 19-րդ համագումարի պատմական որոշումներով ու ընկեր Ստալինի «Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» հանճարեղ աշխատությամբ, հաղթականորեն գնում են դեպի կոմունիզմ, միշտ վառ կպահեն աննկուն բոլշևիկի, անվեհեր հեղափոխականների անմահ հիշատակը։

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 5, էջ 106։